

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՕԻՏՈՐՆԵՐ

(20-րդ դար)



Բ. — ԹՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ

(Շարունակութիւն տես Բազմավէպ, 1925 էջ 276)

Մինչև 1915 թւականը երաժշտութեան ուսումնասիրութեան կրակով սովորում է կօնսէրատօրիայում: Գեղարւեստի այդ տաճարը խոշոր ազդեցութիւն է գործում նրա վրայ: Այնտեղ նա սնոււմ է ռուս նորագոյն երաժշտական դպրոցի աւանդութիւններով: Նոյնպէս մօտիկից լսում է մեծ արւեստագէտների ստեղծագործութիւնները և լրջօրէն ուսումնասիրում երաժշտական կուլտուրայի լաւագոյն էջերը:

Այդ շրջանում էլ նա մտահոգում է երաժշտական հրատարակչական գործունէութեամբ: Առաջին հերթին կազմակերպում է մի շարք դպրոցական և արտադպրոցական հայ երաժշտական գրականութեան հրատարակութիւնը: Այնուհետև նա ընդգրկում է աւելի լայն ծրագիր. — Հայ երաժշտագէտների՝ Մակար Եկմալեանի, Կարա-Մուրզայի, Զէօրեքչեանի, Կոմիտասի ստեղծագործութիւնները հրատարակելու գեղեցիկ գաղափարով տոգորւած՝ ձգտում է կազմել «Հայ երաժշտական հրատարակչական ֆոնդ», բարոյապէս աջակից ունենալով պրօֆ. Վարդան Վարդանեանին:

Սկսում է գործը նոր եռանդով և ոգևորութեամբ, նոյն իսկ Լայրցիգից պատւիրւում են մի քանի տեսակի մայր-տառեր (պոչասոն), Ռոմ. Մելիքեանը շտապում է Թիֆլիզ՝ հրատարակութեան համար ցուցակագրելու, դասաւորելու Մակար Եկմալեանի, Կարա-Մուրզայի ցիր ու ցան ձեռագրերը: Ամիս ու կէս աշխատելով՝ Եկմալեանի ձեռագրերի մի մասը (Ս. Եսայեանի մօտ գտնւած) կարողանում է կարգի բերել և պատրաստել հրատարակութեան, սակայն համաշխարհային պատերազմը խանգարում է նրա գեղեցիկ ձեռնարկութիւնը¹:

1916 թւականն է: Մասաչուզ իմերիայիստական պատերազմն անդադաւում է Ռոմ. Մելիքեանի կանոնաւոր պարապմունքների վրայ: Զինակոչից խուսափելու համար թողնում է նա Պետերբուրգը և անցնում Կովկաս: Բայց նրա մրկող հոգին այնտեղ էլ հանգիստ չի գտնում: Եւ նա ճանապարհում է Հայաստանի խորքերը աւելի մօտիկից լսելու ու զգալու համար հայ երգն ու հայ ժողովրդի տառապանքը: Այդ իդէաով տոգորւած Թափառում է նա ամբողջ վանայ շրջանը, Հայոց ձորը, Մշոյ դաշտը, Տաւրոսի փէշերը:

Ինչ են տալիս նրան այդ Թափառումները: Նրա մէջ առաջ է գալիս հոգեկան մի անսպասելի բեկում: Լցւած նորանոր տպաւորութիւններով, համակւած Ռու-

1. Եկմալեանի ձեռագրերը 1922 թ.ին Թիֆլիզից փոխադրում է Ռոմ. Մելիքեանը Երեանի պետական Բնագրանի «Գրական-Պատմական» բաժնից, ուր այժմ պահւում են մի առանձին դարակում: Ա. Ե.

սաստանի յեղափոխութեամբ, ձգտում է անջատել նախկին ակադեմիք ըմբռնողութիւններից և աւելի հարազատ ու անմիջական մօտեցում ստեղծել երաժշտական տեխնիկային և Հայ ժողովրդական արւեստին: Այդ յեղաշրջման ազդեցութեան ներքոյ էլ նա նոր ուղիներ է որոնում հայ երաժշտութեան վերածնութեան համար: Նա գտնում է, որ հայ երգերի մէջ արժէքաւորները այնպիսիներն են, որոնք արդիւնք են Հայ հասարակական պատմական կեանքի կուլտուրական փարթամ շրջանների: Այդ հին երգերը սակայն համարեա թէ կորսել են և միայն նրանց մնացորդ բլիշներն երբեմնակի հանդիպում են զանազան տեսակ լեզական բացառանշութիւնների կամ այս կամ այն ժամանակակից երգերի մէջ: Ահա այդ բնորոշ բլիշներն են, որ պէտք է նիւթ դառնան զաւրից հայ երաժշտութեան վերածնութեան նրա հիմնքների, մէլոսի, հարմօնիայի, կօնտրապոնկտի, ազդիկայի ու դիսմիկայի համար:

1916-1919 թւականը Ռոմ. Միլիքեանն ինքնանփոփոխում է վերոյիշեալ հետազոտութիւնների մէջ և այդ ուղղութեամբ անում նշանակալից նաճույններ, որոնք ցոլանում են նրա «Զմրոյիտ» և «Զատ-վառ» երգերի շարքում, որ ցուցադրում է «Երգ-Երեկոյ» եան:

Գալիս է 1921 թւականը: Դա կովկասի պրոյեստարական յեղափոխութեան խոշոր ժամանակաշրջանն է: Այս շրջանում էլ Միլիքեան նետում է հրապարակ: Իր շուրջ համախմբում է թիֆլիսի հայ երաժիշտներին «Հայ երաժշտութեան աշխատատեղների միութիւն» անուն տակ և կազմակերպչական գործունէութիւն է ցուցադրում «Հայ արտեստի տան» («Հայարտան») սեկցիաների (զրական, թատերական, նկարչական, երաժշտական) կենդրոնացման և համագործակցութեան շուրջ:

Այնուհետեւ նրա առաջ բացում է երաժշտական-հասարակական գործուհիւն: Նիւթեան աւելի լայն աշխարհ: Հայաստանի լուսաւորութեան կոմիտայ՝ Աշոտ Յովհաննիսեան հրաւիրում է նրան Հայաստան՝ աշխատելու երաժշտական կուլտուրայի ասպարիզում: Նա իր ընկեր Արուս Բաբալեանի հետ 1921 թ. Մայիսին տեղափոխում է Երևան և յամառ տոկունութեամբ հիմք դնում Հայաստանի առաջին երաժշտականը:

Այդ օրանից մինչեւ այսօր կանգուն է այդ կուլտուրական հիմնարկութիւնը:

Այդ օրանից մինչեւ օրս արւեստի այդ տաճարում Ռոմ. Միլիքեանը լցած խոր հաւատով, աշխատում է հայ երաժշտութեան ինքնուրոյն վերածնութեան մեծ գաղափարին:

Մենք անհրաժեշտ համարեցինք մանրամասն կանգ առնել Ռոմ. Միլիքեանի կենսագրական այն մօմէնտների վրայ, որոնք անմիջականօրէն կապւած են նրա հետ: Դրանով մեր նպատակն էր աւելի որոշ և լրիւ գծագրել արւեստագէտի դէմքը:

III. Ազդեցութիւններ.

Ինչպիսի ազդեցութիւններ է կրել Ռոմ. Միլիքեանն իր երաժշտական գործունէութեան ընթացքում: Արւեստագէտի գեղարւեստական զարգացման հարցը պարզելու և առհասարակ նրա ամբողջ գործը լաւ պատկերացնելու համար՝ ահագին կարեւորութիւն է ներկայացնում այդ խնդրի լուսաբանութիւնը: Մենք գէթ էական գծերով կանգ կ'առնենք այդ երեւոյթների վրայ, որոնց մէջ զարգացել ու հասունացել է նրա տաղանդը:

1. Ռոմ. Միլիքեանի Երաժշտանոցում կատարած զերի մասին տես Հ. Ս. Խ. Հ. Կօնսէրաստրիայի պատմութիւնը, Ա. Ե.

Ռոմ. Մելիքեանն իր երաժշտական ստեղծագործութիւնների ընթացքում կրել է զանազան ազդեցութիւններ: Սկզբնական շրջանում նրա երաժշտական տաղանդը զարգանում է եւրոպական և ռուսական արւեստագէտների ազդեցութեան տակ: Ազդոււմ է նա զլիւսաւորապէս ռուսական և ֆրանսական շիւլաներից: Նրա երա-



Ռոմանոս Մելիքեան

ժըշտական մօտիւնների վրայ խոր հետքեր են թողնում և գերմանական շիւլայի ներկայացուցիչները՝ Մօցարտ և Շուպանը: Միջազգային այդ հանճարներն անմիջականօրէն խորը կնիք են դնում նրա հոգու և զգացումների վրայ: Այդ ազդեցութեան տակ էլ նա գրում է «Աշուն տողեր» և «Հիւսիսի երգեր»-ի շարքը, որոնք

թէ՛ իրենց տէխնիկայով և թէ հոգեբանական հիւսուածքով կրում են եւրոպական արւեստի կնիքը:

Երկրորդ շրջանում Ռոմ. Մելիքեանն աստիճանաբար կտրում է իր կապերը արեւմտադարի ասանդուսիաններից և թևակոխում է մի նոր շրջան: Այդ շրջանում նա խուսափում է ունենալ մի ընտրեալ ֆետիշ: Երաժշտութիւնը նմանեցնում է նա մի փունջ ծաղիկի, որի գեղեցկութիւնը գտնում է բազմազան երանգների և տարբեր կազմերի ու ձևերի մէջ: Նա սրտում է և վերգնահատում որքան բախի միատուր քան, նոյնքան էլ Մօցարտի ոսկօզն կամ Բեթհովէնի դրամատիզմը: Նրա սրտին հասարակաշարի մօտ են և՛ ֆրանսական մօտէրնիստները և ռուսական նարոտնիկները:

Այդ շրջանում նրա տաղանդն աւելի է հասունանում, ճաշակը նրբանում, ստեղծագործական կարողութիւնն աւելի լայնանում և նա հանդէս է գալիս միանգամայն շեշտւած և ինքնուրոյն կերպարանքով: Այդ շրջանի նրա ստեղծագործութիւններն են «Զրոյիստ» և «Զատ — վատ» երգերի շարքերը:

IV. Ռոմանոս Մելիքեանի երաժշտական ստեղծագործունեւնեցը.

Ռոմ. Մելիքեանն իր տասն և հինգ տարւայ զործունեութեան ընթացքում հայ երաժշտութեան տւել է մի շարք երաժշտական հատւածներ, որոնք հայ երաժշտ. տութեան պատմութեան մէջ կարող են պայծառ տեղ զբաւել: Մենք չենք խօսում այդ զործերի առանձին արժանաւորութիւնների մասին. այդ կը տեսնենք հայ և օտար քննադատների գրականութեան մէջ: Այստեղ գծենք միայն նրա տպագրւած և անտպագր զործերի պատկերը:

Ա. Նրա որոգրւած սոքոլոգիքայինները:

1. *Opus I.* «Երկու երգ» № 1. «Աշուն երգը» (խօսք Յով. Թումանեանի), № 2. «Վարդը» մեքսիկա (խօսք Գոթֆրէդի), ներքաւ Մալար Եմադեանի յիշատակին, Պետերբուրգ 1912 թ.:

2. *Opus II.* «Երկու երգ» № 1 «Ուտենի» Դուէս (խօսք Աժ. Սեկոյեանի), N. 2 «Անշատում» (խօսք Յով. Թումանեանի), Պետերբուրգ 1913 թ.:

3. «Հայ ծաղկաբուս երգեր», Էսթրէլեր, առաջին սերիա, 1. «Կոտուկէս», 2. «Լուսանի տնու», 3. «Անձրեւ եկա», 4. «Ինչն ընդհուր մտա», 5. «Աղէկէք, պար բոնեցէք» (խօսք Ղ. Աղայանի) և 6. «Այլ Ման», 1913 Լաբըրէ:

4. «Երաժշտական Արքանաբան», դասագիրք երգ-ձայնազրութեան, առաջին մաս (գիտատնիք), կազմեցին Ռոմանոս Մելիքեան և Ալլա Մանուկեան, 1913 թ. Պետերբուրգ: Արժանապատ և Պետերբուրգի «Պետական Կենսաբանաբանական Խորհրդի» դրամատի:

5. «Դպրոցական երգեր», առաջին մաս, ծաղկածու մանկական երգերի, 1923 Երևան:

6. «Աման տղեր» — 1. «Յրտաւար — Հաջմաւար» (խօսք Վահան Տէրեանի), տպագրւած է 1909 թին Գարեգին Լեւոնեանի «Գեղարեւոտ»-ի № 2-ում:

7. «Սոնետ» «Արեւիկայի երգերն են թափառում» (խօսք Վ. Տէրեանի), տպագրւած է 1910 թին Գ. Լեւոնեանի «Գեղարեւոտ»-ի № 3-ում:

8. «Պրիկայ» գաղնամուրի նամար, տպւած է Գ. Լեւոնեանի «Գեղարեւոտ»-ի 4րդ նամարում:

Բ. Անտպագր սոքոլոգիքայինները:

Ա. շրջան

(1908-1915)

1. «Աման տղեր», առաջին սերիա (Վ. Տէրեանի Բանաստեղծութիւններից), 1. «Առու է անձրեւ», 2. «Դու տնուդ նայեցիր», 3. «Երբ կզայ նա», 4. «Հեռու դպակի քնքուր թաղուին»:

2. Աման տղեր, երկրորդ սերիա (Վ. Տէրեանի Բանաստեղծութիւններից), 1. «Մոռանալ, մոռանալ», 2. «Փորձի երգը», 3. «Գարունն աչկան ծաղիկ է վառել», 4. «Խմ գրեթեմանն դուք չմտնեցէք», 5. «Քնքաւորք ծաղկանց հեղէն խաղով»:

3. «Հիսուսի երգեր» — 1. «Եկաւ դարուն» (խօսք Կարապետ Միքեանեանի), 2. «Ժպտացել են քեզ»

(Խօսք Գեորգ Մահանի), 3. «Ուշ է արգէն» (Խօսք Յովն. Թումանյանի), 4. «Տարէջ նշմար» (Խօսք Արմենուհի Տեղբանեանի), 5. «Օ-մի՛ թախի՛ր» (Խօսք Արուս Բարաշեանի),

4. «Բայաւոր-ափօր-» (Երեմիկ աղետ, կար մի թաղաւոր» (Խօսք Հայեն - Ա. Մատուրեանի). ձայնի և օրհնատերի նամար:

Բ. Շրջան

(1916-1921)

5. «Մաղիկների լեզվեցներ», էսկիզներ, ա. սերիա 1. «Վարդը», 2. «Նարգիզը», 3. «Նանուֆարը», 4. «Փուշը», զանաւանութի նամար:

6. «Զմրուխտ երգեր», ա. 1. «Սեւ կաշաւիկ» (Յովն. Թումանյանի), 2. «Վայրի ժողիկ» (Լեւոն Ման. լեւիանի), 3. «Փշեց ցուրտ քամիկ» (ԱԹ. Խեկոյանի), «Մարգարտը» (Լեւոն Գրիգորեանի), ձայնի և զանաւանութի նամար:

7. «Զմրուխտ երգեր», բ. սերիա 1. «Մի՛ լար, մի՛ թաղիր աշխարհ» (Դերեմիկ Դմիտրիանի), 2. «Գեւ. չերն եկաւ, եկաւ» (Գառնիկ Գեալույանի), 3. «Եւ ըլլաւ եմ» (ԱԹ. Խեկոյանի), 4. «Շափաղ կուտաս», (Ա. Խաւանկեանի). երգի և զանաւանութի նամար:

8. «Զմրուխտ երգեր», գ. սերիա 1. «Զմրուխտայ երգեր» (Ա. Խաւանկեանի), 2. «Օրօք նանա» (ժողովրդական բանահիւտութիւնից), 3. «Երէ՛մ-էլ» (ԱԹ. Խեկոյանի), 4. «Մանուկն ա Ջուրը», (Յովն. Թում. մանեանի). ձայնի և զանաւանութի նամար:

9. «Զմրուխտ երգեր», գ. սերիա 1. «Երես ունի» (Նանապետ Գուշակի), 2. «Ա՛խ, ալ վարդի» (Ա. Խաւանկեանի), 5. «Աստ ժիժեա» (Գ. Գեալույանի), 4. «Մեր սարերէն, խոր ձորերէն» (Ա. Խաւանկեանի), էսկիզ. ձայնի և զանաւանութի նամար:

10. «Գիշերն երազով, զօր կարտով» (Ա. Խաւանկեանի), ձայնի և զանաւանութի նամար:

11. «Զառ-Վառ», Ա. սերիա 1. «Արջի վշտը» (ԱԹ. Խեկոյանի), 2. «Օրօրաց» (ժողովր. բանահիւտութիւնից), 6. «Երջ աղիկ» (Ղազ. Աղայանի),

12. «Զառ-Վառ», Բ. սերիա 1. «Դիլի շուն» (ժողովրդական), 2. «Տոյ, տոյ» (Ա. Խեկոյանի) 3. «Երեւի սէրը» (Յ. Աղաբաբի), գ. «Զեկիկ» (ժողովրդական), 5. «Աղաղակը» (Ա. Խաւանկեանի), 6. «Աղւալը» (ժողովրդական), երգի և զանաւանութի նամար:

13. «Զառ-Վառ», Գ. սերիա 1. «Զատիկ» (Յ. Աղաբաբի), 2. «Լուսինն եկաւ» (Յ. Աղաբաբի), 3. «Հախարակ» (Յ. Թումանյանի), 4. «Արի, արի» (Ա. Խեկոյանի), 5. «Նորին, Նորին» (ժողովրդ. դասկան), 6. «Գիշեր» (Հայր. Հայրապետեանի). երգի և զանաւանութի նամար:

14. «Զառ-Վառ», Դ. սերիա 1. «Ա՛, Դանգանի» (ժողովրդ.), 2. «Մաղկանց դժբը» (ժողովրդ.):

15. «Համարձման ցիւր», էսկիզներ (Յ. Թումանյանի), օրհնատերի նամար (կապիթ):

16. «Վարդանանք» (Լեւոն, պէ՛հայի նաւած), 1. «Երկու պար», 2. «Արեւի նաղը», 3. «Խրախ. ճանք», 4. «Քուրմերի միտունները», 5. «Ղեկնորհանց քայլերը», 6. «Տէր պողոմեա»:

17. «Հա փոքր» 1. «Սուրիկի վշտը» (Գեորգ Մահանի), 2. «Գող- աւաղակ» (Ա. Խեկոյանի), 3. «Բաղդի բերամար» (Գ. Մեհեանի), 4. «Ալ ըլլիմ» (Յար. Թումանյանի) և 5. «Ա՛խ, ինչ կըլլի» (ժողովրդական):

Այնքանց այժմ այդ ստեղծագործութիւնները էութեան, նշանակաւ կառուցածքին, ոյժին և խորութեան զգացմունքին, Գրանով էլ կ'արդարանանք բնորոշի Ռոմ. Միլիքեանի սեղը նայ երաժշտութեան պատմութեան մէջ:

V. Ռոմ. Միլիքեանի ստեղծագործութիւններն իրենց էութեամբ եւ հոգեկան կառուցածքով:

Ռոմ. Միլիքեանի ստեղծագործութիւններն իրենց էութեամբ և հոգեկան կառուցածքով գերազանցապէս լիբիքական են. կան նաեւ հիւսօրական և էպիքական հիւսուածքներ, որոնք դարձեալ օժտած են լիբիքական բնոյթով բնատուրութեամբ այդ տարբեր նիւթերը նկարում է արեւստագէտը մի ընդհանուր գծով. Դա նրա բնորոշ առանձնայատուկութիւնն է:

Նրա երաժշտական գրածները մեծ մասով կրում են դարու իրայատուկ թոյլները և միաժամանակ ամենասերտ կերպով օղակած են ժողովրդի հետ: Ի զուր չէր նրա ճանապարհորդութիւնը դէպի Հայաստան հէնց այն ժամանակ, երբ տառապում էր հայ ժողովուրդը և կոտորում էին հազարաւոր մանուկներ: Այդ

շրջանում նա կապում է ժողովրդի սրտի, երակի հետ, զգում է նրա սրտի բա-
րախումբները, նրա վիշտը և արտայայտում, եթէ ոչ համապատասխան մեծութեամբ,
զոնէ պատշաճ արտահայտութիւն։ Այնտեղ դուք տեսնում էք, թէ ինչպէս մի ամբողջ
ժողովուրդը գալարում է, տարբերութեամբ, ընկնում և լալիս կենանքի զարհուրելի
ուրրտում։ Այդպէս են նրա «Սեւ կաթակիլը», «Օրօ՛ր Դարդարը», «Արջի վիշ-
տը», «Ասա ծիծեռն»։ Նրանց մէջ իրական, խոր, արտառուչ դրամա, հոգեկան
խորունկ զգացմունք կայ։ Այդ բոլորը բղխում են մօր ապրումներից ու վշտից,
որով և տգորւած են համամարդկային ընդհանուր բնոյթով։

VI. Նրա երաժշտութեան ոյժն ու խորութիւնը։

Ուրա. Մելիքեանն եւրոպական մտքով հասունացած, ներքոյն ու խորապէս
զգացող մի էսթէտ է։ Այդ է պատճառը, որ նրա ստեղծագործութիւնները գեղար-
ւեստական տեսակէտից խոշոր արժէք են ներկայացնում։ Նրա հետ ունեցած մեր
գրողի ընթացքում նա արտայայտեց այն բնորոշ միտքը, որ «Իւրաքանչիւր ձայն
դարարում է ֆիզիքական լինելուց այն ժամանակ միայն, երբ նրան դպչում է
արեւստագէտի հրեղէն շունչը։ Նօթաներ գրելը դեռ չի նշանակում երաժշտութիւն
յայտնաբերել։ Անմահ Գլիլկի, Բախի, Մօցարտի նօթաները ֆիզիքական ձայներ
չեն, այլ հոգու թրթիռներ, որոնք մինչեւ օրս էլ զգում էք, ապրում էք դուք»։
Ուրա. Մելիքեանը մեծ արեւստագէտների այդ աւանդները աշխատել է պահպանել։
Նա իր ստեղծագործութիւնների մէջ մտցրել է այն կենդանի հիւսւածները, որոնք
ցօլանում են յայտարար մեծ երաժշտագէտների գործերում։ Եւ պարզ է, թէ ինչպէ՛ս հա-
նամար նա աստիճանաբար ունեցանում է իր այն ձեռագրերը, որոնք իր կարողութիւնը երա-
ժշտարարին չեն։ Նա Շոպենի նման իր գործերի ամենախիստ ցնաղատն ամենից
առաջ հէնց ինքն է։ Այդ պատճառով էլ նրա ստեղծագործութիւններն օժտւած
են գեղարւեստական արժանիքներով։ Նրանց մէջ դուք տեսնում էք բանաստեղ-
ծութեան հոգեբանական իմաստի և երաժշտական բովանդակութեան սերտ շաղ-
կապում, հարմոնիայի շարահիւստների սահուն, խորիմաստ, գեղեցիկ հետևողակա-
նութեան և միաժամանակ տրամադրութեան ճշգրիտ վերարտադրութիւն։ Գլխաւա-
րապէս խուսափում է նա աւելորդ ձայներից և միապաղաղ ու մօնօտոն հնչիւն-
ների շարժոյն զուգահեռութիւններից։ Տալիս է գոյներ, կօնտրաստներ և հոգեկան
յոյգերի հարազատ արտայայտութիւններ, շեշտակի ու հակիրճ ֆորմաներով։ Ընդ-
գծենք և այն, որ նա իր ինքնուրոյնութիւնն ու անհատականութիւնն ամփոփում
է երաժշտական նորանոր և արտայայտիչ ձեւերի մէջ և պատկերացնում տարբեր
յոյգերով ու ապրումներով։ Շնորհիւ այդ հանգամանքի նրա ստեղծագործութիւն-
ները բազմազան են և բազմերանգ, բայց միևնոյն ժամանակ ընդհանուր են իրենց
էութեամբ։

Սակայն նրա ստեղծագործութիւններն ունեն մի այլ բնորոշ գիծ. դա հարա-
զատութիւնն է, որ ամենաանբար կերպով օղակւած է զգացմունքի անսահման ան-
կեղծութեան, պարզութեան հետ։ Նա իր լաւագոյն մէլօդիաների վրայ դրոշմելով
իր ուժեղ անհատական կնիքը, զարմանալի ջերմութիւն է մտցնում իւրաքանչիւր
երգի, իւրաքանչիւր շորիթի մէջ։ Այս բոլորի վրայ աւելացնենք ձայնի, ոճի թա-
փանցկութիւնը, երաժշտութեան նկարչութիւնը, գծեր, որոնք անմիջական կերպով
բղխում են արեւստագէտի հոգեկան աշխարհից և կազմում են նրա գլխաւոր ա-
ռանձնայատկութիւնները։ Իսկական արեւստագէտի յատկանիշներ են դրանք և
հէնց այդտեղ էլ կայանում է նրա մեծութիւնը։

(Շարայարելի)

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ